

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԲՐՄԱՀԱՅՔ

(Շարունակութիւնն նախորդ քիւէն եւ վերջ)

Հայ եկեղեցիներ. — Հայերը Բրմաստանի Աւա, Սիրիամ, Ռանգուն և Մանդլէ քաղաքներուն մէջ ունեցած են իրենց եկեղեցիները: Ներկայիս Սիրիամի և Աւայի տաճարներուն տեղն անգամ յայտնի չէ: Անոնց մասին շատ քիչ ծանօթութիւն ունինք, սրովհետեւ եկեղեցական արխիւներն ի սպառ կորած են: Ռանգունի և Մանդլէի եկեղեցիները թէպէտ դեռ կանգուն են, բայց անոնց վերաբերեալ տուժարներն ալ փճացած են ճափոնացիներու գրաւման ժամանակ:

1743ին, Սիրիամի վրայ մղուած պատերազմի հետեանքով՝ հայոց եկեղեցին կը կործանուի: Այդ թուականներուն Սիրիամ ապրած են 60 տուն հայեր, և եկեղեցիէն զատ ունեցած են իրենց յատուկ գերեզմանատունը: Սիրիամի անկումէն յետոյ, հայեր գլխաւորաբար Ռանգուն կը հաստատուին, ուր 1766ին Գրիգոր Այվազ եկեղեցի մը կը կառուցանէ, որ զժրախտաբար կը կործանի 1824ին, անկո-բրմական պատերազմին հետեանքով: Հայեր վերստին կը կառուցանեն զայն յանուն Ս. Աստուածածնի, երիցատունով միասին: Երկու շէնքերն ալ 1850ին, քաղաքին մէջ պատահած հրդեհէ մը հրոյ ճարակ կ'ըլլան: 1858ին, կառավարութիւնը քաղաքին կեդրոնը հողամաս մը կը նուիրէ հայերուն, ուր անոնք 1862ին Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին կը կառուցանեն: Օծումը կը կատարուի 1863ին: Հետագային, եկեղեցին կ'ունենայ իր ընդարձակ սրահը՝ երիցատունով միասին: Համաշխարհային Բ. Պատերազմին, սոյն

նութիւն միայն գոյութիւն ունի. անիկա ոչ բութուական է և ոչ ալ ընկերվարական, այլ լոկ լեզուաբանական առարկայական գիտութիւն:

ԱՆՈՒՇԱԽԱՆ ՎՐԴ. ԶՂՋԱՆԵԱՆ
(Շարունակելի՛ 2)

եկեղեցին ուժրակոծութենէ կը փասուի, իսկ երիցատունն ու սրահը բոլորովին կը քանդուին: Եկեղեցական տուժարներ և ա. նօթեղէններ կը կորսուին, իսկ հայեր խուճապահար կը փախչին զէպի Հնդկաստան: Պատերազմէն ետք, Ռանգունի հայ զոհաբերող գաղութը, Կալկաթահայերու ալ օգնութեամբ, կը վերանորոգէ տաճարը՝ որուն օրհնութիւնը կը կատարէ Տ. Վարդան Քհ. Վարդանեան, 1948 Յունիսին: Ներկայ շէնքը խաչաձև է և անդամթ. արեւմտեան, հիւսիսային և հարաւային կողմերը անդատակներ ունի: Տաճարը կոկիկ է և լաւ յարգարուած:

Մանդլէի հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցին կառուցուած է Մինգուն Մին թագաւորի ժամանակ ԺԹ. դարու կէսէն ետք, իր իսկ օժանդակութեամբ: Տաճարը վերանորոգուած է 1935ին: Խաչաձև, սիրուն շէնք մըն է, առանց գմբէթի: Երբ 1958 Յունուարին այցելեցինք Մանդլէ, եկեղեցին գտանք բոլորովին մերկ. լքուած և կիսաւեր վիճակի մէջ: Իր ամենէն քաղաւառ շրջանին, հայ ժողովուրդի թիւը հազիւ հարիւրեակի մը հասած է: 1908էն ի վեր քահանայ ունեցած չեն, սակայն ժամասացութիւնը չէ զաղրած շնորհիւ Պր. Վրթանէսեանի և Արգարեան Եղբարցի Մինչև Համաշխարհային Բ. Պատերազմը, հազիւ 20 հայեր կ'ապրէին հոն. ներկայիս միայն երկու հայ մնացած են և անոնք ալ օտարներու հետ ամուսնացած: Եկեղեցիին արեւմտեան կողմը կը գտնուի ընդարձակ երիցատուն մը, կիսաքանդ վիճակի մէջ: Մանդլէէն մեր վերադարձին, Ռանգունի հայոց եկեղեցւոյ վարչութեան թեմադրեցինք որ վերանորոգեն Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին: Հակառակ անոր որ վարչութիւնը որեւէ կերպով պատասխանատու չէր այդ 400 մղոն իրենցմէ հեռու գտնուող տաճարի վերանորոգման և հակառակ իրենց տրամադրութեան ներքեւ եղած գումարներու նուազութեան, արհուական ժեստով մը՝ որ միշտ յատուկ եղած է այդ մարմնոյն, ընդ առաջ գացին մեր խնդրանքին, ու ամիս մը առաջ վարչութեան ատենապետը կ'իմացնէր մեզի թէ արդէն տաճարը վերանորոգուած է, մինչ հոս Կալկաթայի մօտ, հազիւ 120 մղոն հեռաւորութեան վրայ, Սէյդա-

բազիլ հայոց զեղադիր եկեղեցին իր զերեկ-
մանատունով օրըստօրէ կը քայքայուի՝
հակառակ իր բարեկարգութեան և պահ-
պանման համար աւանդ թողուած և կալ-
կաթայի Ս. Նազարէթ եկեղեցւոյ վարչու-
թեան արամադրութեան ներքեւ գտնուած
գումարներուն։ Ու ի՞նչ հեղինակ, որ բարի
հոգիներուն կտակը, որ գոնէ տարին մէկ
անգամ իրենց հոգիներու խաղաղութեան
համար Ս. Պատարագ մատուցուի Սէյդա-
բազիլ եկեղեցւոյն մէջ, կը մոռցուի, կ'ան-
տեսուի Կալկաթայի եկեղեցւոյ վիճակաւոր
քահանաներուն կողմէ։ Բայց չի մոռցուի
ժամուցը և ոչ ալ կը զլացուի անոր վճա-
րումը վարչութեան կողմէ. ժամուց՝ որուն
համար պատարագ ու հոգեհանգստեան ա-
ղօթք է մատուցուած։

Բրմացած հայեր. — Բրմաստան գաղ-
թող հայերէն մաս մը դարերու ընթացքին
ձուլուած են։ Անոնցմէ ոմանք թէպէտ
մնացած են քրիստոնեայ, սակայն յարած
են ուրիշ յարանուանութեանց՝ բաժնուելով
Հայց. եկեղեցիէն. իսկ ուրիշներ Պուտ-
տայական կրօնքը ընդունած են։ Այս վեր-
ջիներուն մէջ գտնուած են բարձր դիր-
քերու տիրացած անձնաւորութիւններ։
Բրմաստանի ներկայ գլխաւոր գատաւորը՝
Եւս Զան Տուս Օնգ, պուտտայական մըն է
և Զաքարեան մականուամբ հայու մը թողը։
Բրմաստանի առաջին վարչապետը՝ Բա Մաւ,
և իր եղբայրը՝ Բա Հան, Բրմաստանի ներ-
կայ ընդհանուր գատախաղը, հայկական
ծագում ունին։ Բա Մաւ, որ ոմանց կողմէ
Բրմաստանի ամենէն կարող անձը կը նկատ-
ուի, անգլիացիներու օրով և մինչև 1945
Բրմաստանի վարչապետ եղած է, ինչպէս
նաև կրթական նախարար։ Երբ իրեն այցե-
լեցինք, յայտնեց որ Բրմաստանի ամենէն
ազգեցիկ օտար տարրը, բացառելով ան-
գլիացիները, հայերը եղած են։ Վաճառ-
կանական ասպարէզի մէջ ունէ ազգ գիրենք
չէ գերազանցած։ Բա Մաւի հայկական ա-
նունը Եղիա Կարապետեան է։ Մէյմիսյի
մէջ հանդիպեցանք Միլթոն Յովհաննէսեան
անուն հայու մը, որ սպայի աստիճան ու-
նէր Բրմական բանակի մէջ և որ նոյնպէս
պուտտայական կրօնը ընդունած էր։ Ռան-
գունի մէջ ալ ներկայիս կը գտնուին սա-

կաւթիւ օտարացած խառնածին հայեր,
որոնք պուտտայական կոտորունը կը յա-
ճախեն։

Ազգային կեանք. — ԺԼ. դարու կէսէն
ետք, հայերը կը սկսին հաստատուիլ Ռան-
գուն և կը բազմանան, այնպէս որ Համաշ-
խարհային Բ. Պատերազմէն առաջ անոնց
թիւը 350-ի կը հասնի։ Բրմահայեր թէպէտ
կառուցած են եկեղեցիներ, բայց զպրոց
չեն ունեցած։ Մայրենի լեզուի ուսուցման
անտեսումը նոր սերունդի օտարացման
պատճառ հանդիսացած է։ Մամուլ ալ չեն
ունեցած, ի բաց առեալ «Յառաջ» անգլի-
էն ամսաթիւի, խմբագրուած Մ. Վար-
դանեանի և Մ. Գասպարեանի կողմէ 1937
— 1941 թուականներուն։

Նախապատերազմեան շրջանին, օտար
միւս փոքրամասնութեանց նման, հայերն
ալ Բրմաստանի քաղաքային կեանքի մէջ
քուէ տալու և ընտրուելու իրաւունք ունե-
ցած են։ Բրմաստանի անկախութենէն ետք,
համաձայն նոր սահմանադրութեան, փոք-
րամասնութեանց իրաւունքները ջնջուած
են. — «Բրմաստանը բրմացիներուն է»։
Այս պատճառաւ, միւս ազգերուն հետ,
հայեր ալ հետզհետէ կը հեռանան գիւտ-
տուներու երկրէն։

Ռանգունի հայերը ընդհանրապէս իրենց
համերաշխ գործունէութեամբ, փոխադարձ
սիրով ու հասկացողութեամբ և իրարու
հանդէպ ունեցած վստահութեամբ՝ օրինա-
կելի և տիպար գաղութ մը հանդիսացած
են, կադմելով մեծ ընտանիք մը. իրաւամբ
հակապատկերը հնդկահայութեան, որոնց
մէջ վէճեր և հակառակութիւններ անպակաս
եղած են և այդ պատճառաւ պետութիւնը
իր հակակշռին տակ առած է ազգային ա-
ւանդներն ու եկեղեցական կալուածներուն
հասոյթները։ Նմանօրինակ պետական հա-
կակշիւ գոյութիւն չունի Բրմաստանի գա-
ղութին մէջ։

Բրմահայերը եղած են բարեկեցիկ և
ազգօգուտ ձեռնարկներու սատարող։ Հա-
մաշխարհային Ա. Պատերազմին, այս մեծ
ընտանիքը եղբայրական սրտազին օգնու-
թիւն կ'ընէ հայ ազգետններուն։ Նախ
1915-ին իրենք իրենց մէջ յանձնաժողով մը
կը կազմեն, որ կը հանգանակէ 15,000

սուփի: Հետագային, Թորգոմ Սրբազանի (1917) ընդհանուր հայ աղէտեալներու, Մարտիրոս Յ. Գուլումճեանի (1919) և Յովհաննէս Ծ. Վրդ. Հիւսեանի (1926) Միջագետքի հայ տարագրեալներու, Մեսրոպ Մազիստրոս արքեպիսկոպոսի (1928) Մայր Աթոռի և Ամենափրկչեան վանուց բարեգործան, Յարութիւն Յովակիմեանի (1935) Պէյրուսի Նոր-Հաճնոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ շինութեան և այլ հանգանակութեանց իրենց լիարուսն նպաստը կը բերեն:

Համաշխարհային Բ. Պատերազմէն առաջ, Ռանգունի հայերը ունեցած են բարեգործական, ընկերային և մարզական միութիւններ: «Կանանց Բարեգործական Միութիւն»ը հիմնուած է 1916ին, օգնելու համար հայ աղէտեալներուն, և այս ուղղութեամբ ունեցած է յաջող գործունէութիւն: Պր. Հրաչ Երուսանդ 1927ին Հ. Բ. Ը. Միութեան մասնաճիւղ մը կը հաստատէ: 1935ին անոր տեղ «Բարեգործական Միութիւն» անունով ընկերութիւն մը կը կազմուի, քննելու համար հայ չքաւորներուն: «Հայկական Ակումբ»ը կը հիմնուի 1915ին, ընկերային հաւաքոյթներու և ժամանցի համար, և կը փակուի 1920ին: «Հայկական Առաջադիմական Ընկերութիւն»ը կը հաստատուի 1930ին, նպատակ ունենալով Ռանգունի նոր սերունդը հայ պահել, լեզուի ուսուցմամբ և ընկերային հանդէսներու կազմակերպութեամբ: «Հայ Մարզական Ակումբ»ը նոյնպէս կը հիմնուի 1930ին, նոր սերունդի մարզական կեանքը զօրացնելու և անոնց ընկերային ժամանց տալու: 1931-1933 տարիներուն, այս ակումբը բովանդակ Բրմաստանի Hockeyի մրցանակը կը շահի: Այժմ Ռանգունի հայեր բարեգործական, ընկերային կամ մարզական որեւէ միութիւն կամ ակումբ չունին:

Ներկայ կացութիւնը. — Ներկայիս, Ռանգունի միակ քաղաքն է ուր հայեր կ'ապրին: Անոնց թիւը, խառնածիններով միասին, հազիւ 100ի կը հասնի: Բրմաստանի միւս քաղաքներուն մէջ թէպէտ քանի մը ցրուցանուած հայեր կան, բայց անոնք կորսնցուցած են իրենց լինելութիւնը: Ռանգունի հայերը զրեթէ ամէնքն ալ միջին սերունդէն վեր են, իսկ իրենց զաւակ-

ները գլխաւորաբար Անգլիա կը գտնուին, և ոմանք Ամերիկա՝ ուսանելու կամ գործի համար: Հնդկահայոց նման, բրմահայերն ալ թէպէտ մարմնով հոս կ'ապրին, բայց իրենց հոգին Անգլիա է: Նոր սերունդը հայերէն չի խօսիր, միայն քիչ մը կը հասկնայ: զգացումով և մտայնութեամբ օտարացած է:

Նախքան անկախութեան հռչակումը, Բրմաստանի վաճառականութիւնը օտարներուն ձեռքն էր, բայց հիմա՝ տեղացիներուն: Օտարահպատակներ կառավարական պաշտօնեայ չեն կրնար ըլլալ, իսկ անոնք՝ որոնք պաշտօնեայ են արդէն, կամ իրենց գործը պէտք է թողուն և կամ բրմական հպատակութիւն ընդունին: Իսկ ոմանց տակաւին պաշտօնի վրայ մնալը պէտք է վերագրել իրենց անփոխարինելիութեան:

1942էն ի վեր համայնքը առանց քահանայի է, սակայն պատերազմէն ետք, երբ վերադարձած են Ռանգունի ու վերանորոգած իրենց եկեղեցին, ունեցած են պաշտամունք, նախ՝ Յովակիմ Ստեփանեան, ապա՝ Կարապետ Յովհաննէսյանեան ու Երապիլերներու առաջնորդութեամբ:

Ռանգունի հայեր «սիրով ժամ կը գնան», նախ՝ որովհետեւ բարեպաշտ են և երկրորդ՝ եթէ եկեղեցւոյ դռները փակ մնան Կիրակի և ասնական օրեր, վտանդ կայ որ կառավարութիւնը, իրեն լքեալ կալուած, զայն գրաւէ, հայ քահանայ և ժողովուրդ չըլլալու պատճառաւ: Ներկայիս Տիրացու Կարապետ Յովհաննէսյանեան ամէն Կիրակի ժամատացութիւն կը կատարէ, երբեմն ալ կը քարոզէ, արտօնուած ըլլալով Տ. Վահան Արքեպս. Կոստանեանէ: Իրեն կ'օժանդակէ Տիկին Սուզան Եղիայեան, պատուական հայուհի մը, որ մօտ քսան տարի եկեղեցւոյ երգեհոնը կը նուագէ: Ուրիշ տիրացու մըն ալ՝ Մինաս Աղեքսանդր տարիներէ ի վեր կը ծառայէ եկեղեցւոյ, սարկաւազի բաժինը կատարելով: Երբ այլուր եկեղեցականներու ներկայութեան պարագային իսկ ժողովուրդը այնքան ստէպ և ջերմեանդութեամբ չի յաճախեր եկեղեցի, հոս, ի Ռանգունի, անոնց բացակայութեան Աստուածապաշտութիւնը չի դադարիր սրբավայրէն ներս, Ս. Սեղանին վրայ մօմերը կը պլպլան, խոնկը կը ծխայ ու շարականին քուղը կ'երկարի:

Ռանգունի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին ունի Կառավարչաց Մարմին մը՝ բաղկացած եօթը պատուական ավագանիներէ։ Անոնցմէ մին՝ Բէգլար Յարութիւնեան, Սրբան փառաշուք պանդոկին տնօրէնը, ըստ բոլորի վկայութեան, «Բրմաստանի լաւագոյն հայն է»։ Իրենց եկեղեցական կանոնագրութեան համաձայն, համայնքի անդամները կ'ընտրեն Կառավարչաց մարմին մը՝ որ կը վաւերացուի բարձրագոյն Ատեանէն։ Անոնց պաշտօնը ցկեանու է։ Համաձայն սոյն կանոնագրութեան, կրնանք քուէի իրաւունք չունին։ Նոյն այս սովորութիւնը ունին նաեւ Կալկաթան և Ինտոնէզիան։ Եկեղեցականը կ'ընտրուի համայնքային ընդհանուր ժողովէն՝ երեք տարուան ժամանակաշրջանի մը համար։ Ան եկեղեցական բոլոր գործերուն ընդհանուր յանձնակատարն է։ Այժմու եկեղեցականը Յովսէփ Մարտինեանն է, գործունեայ և հաւատաւոր հայ մը։

Ռանգունի հայ ավագանիներէն Լեոն Եղիայեան թէպէտ արհեստով անուշեղէնի վաճառական է, սակայն արուեստով՝ նկարիչ։ յոյժ հետաքրքրական, ինքնուս և ինքնատիպ արուեստագէտ մը։ Իր բոլոր նկարները հնդկական ոճ ունին։ Աստուածաշունչէն և յունական զիցաբանութիւնէն նկարած է գրուագներ, այնպէս ինչպէս հնդկիկ արուեստագէտ մը պիտի գիտէր, ըմբռնէր և նկարէր զանոնք. երեք ցուցահանդէսներ կ'ադանկերպած է Ռանգունի մէջ, վերջինը՝ Յունուարի 13ին, զոր տեսնելու հաճոյքն ունեցանք։ Արժանի է ամէն զնահատանքի և քաջալերութեան։

Երկու գերեզմանատուներ հայոց կը պատկանին. մին Ռանգունի կեդրոնը՝ Սուլէ Փազոզա պողոտային վրայ, անփառունակ վիճակի մէջ, ուր 1860էն ի վեր մեռել չէ թաղուած։ Քաղաքապետութիւնը եկեղեցական վարչութեան հետ կը բանակցի զայն գնելու և զբօսայգիի վերածելու կամ անոր տեղ չէնքեր կառուցանելու համար։ Այս հանգստարանին մէջ կանգուն կամ կ'իսաքանդ 24 գերեզմաններ կան, որոնցմէ ութը միայն տապանագրութիւն ունին։ Հայոց միւս գերեզմանատունը, որ հարիւր տարիէ ի վեր կը գործածուի, քաղաքին ծայրամասն է. գեղեցիկ և հովասուն վայր մը, պուրակի մը հովանիին ներքեւ, Ռանգունի

հանգստարաններուն ամենէն գեղեցիկն ու բարեկարգը։ Կեդրոնը սխնագարգ չէնք մը կառուցուած է 1869ին, շրջանակուած չորս անդամատակներով, ժողովուրդը անձրեննու տարափէն և կիզիչ արեւէն պատսպարելու համար։

Ռանգունի հայոց եկեղեցին ունի աւանդներ, հիմնադրամներ և հաստեմարեր կալուած։ Անոնցմէ գոյացած եկամուտով և ժողովուրդի նուիրարերութեամբ կ'արելի է դիւրաւ հովիւ մը պահել։

Ռանգուն մեր երկրցս այցելութեանց ընթացքին (1957 Մայիսի 10-21 և 1958 Յունուարի 4-23) հոգեւորապէս մխիթարեցինք համայնքը ժամապաշտութեամբ, Ս. Պատարագի մատուցմամբ, քարոզներով, եկեղեցագիտական դասախօսութիւններով և Մայր Հայրենիքի և Ս. Էջմիածնի շարժանկարներու ցուցադրութեամբ։ Պաղուծը այս բոլորին, մէկ ընտանիքի նման, ներկայ գտնուեցաւ։ Կոչ ըրի ամենուն որ հաւատարիմ մնան իրենց եկեղեցիին և աւանտատարի մնան իրենց հոգիին մէջ վառ պահեն յաւերժական Ս. Էջմիածնի և վստահական Արարատի լուսաշող և յուսաշող պատկերը։

Իր կոչումին գիտակից եկեղեցական մը որտեղանդն նուիրումով կրնայ վերականգնել այս գաղութը և տարիներու ընթացքին հայութիւնէն օժտեալներէն մաս մըն ալ բերել ի գիտութիւն ճշմարտութեան, ի ծոց Մայրենի Ս. եկեղեցոյ։

ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

